



**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ  
ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՍԻՌՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ  
ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ**

Հոկտեմբերի 12-ին, ուրբաթ օր, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Սիրու արքեպիսկոպոս Մանուկյանը հովական այցելությամբ եկավ Շիրակի թեմը, ընկերակցությամբ Հոգեշնորհ Տ. Սղիշի վարդապետ Մարգարյանի:

Հոկտեմբերի 13-ին, շարաթ օրը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապետ Տ. Կոմիտաս վարդապետի և թեմի բահանայական դասի առաջնորդությամբ սրբազնը ուղղվեց Լենինականի Ս. Աստվածածին առաջնորդանիստ հոյակապ եկեղեցին, Տաճարի նախագավում զգայտավորված, սրբազնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր հավաքվել էր Հավատացյալների մեծ բազմություն։ Տաճարում, Շիրակի թեմի առաջնորդական տեղապետ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը, հանուն թեմի հավատացյալների և եկեղեցական դասի, բարի գալուստի և ողջունի սրբազնություն։ Մատուցում էր Հայ եկեղեցու նշանավոր գործիչները, հանձին Ս. Ասմակ Պարթևի և Ս. Մեյրոպ Մաշտոցի, գտան այն ոսկեղեն բանալին, որով բացեցին Հայ հոգու և մարի դռները Աստուծո կենդանի խոսքին։ Հայերը սեփական դիր և զրականություն չունենալու պատճառով Ավետարանը եկեղեցիներում կարդացվում էր Հունարեն կամ ասորերեն լեզուական դիր, որոնցից հավատացյալ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, և հետհարար հոգեկան սնունդ չէր ստանում։ Անհրաժեշտ էր ստեղծել մի այնպիսի միջոց, որով հնարավոր լիներ ժողովրդին մոտեցնել «Անեղի բանին»։ Այս այդ պատվավոր գործը ստանձնեց Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթև կաթողիկոսի և Վուածշապուհ թագավորի օժանդակությամբ։ Մեր պատմության մեջ, — ասաց սրբազնը, — Բարդմանցաց տոնը նշանալոր է նրանով, որ գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ Հայ մարդը մոտենում է Աստուծո և իր լեզվով խոսում նրա հետ։

Հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սիրու արքեպիսկոպոսը եկեղեցին լցվել էր Հավատացյալների խունը բազմությամբ։ Բարեպաշտ հասարակությունը շտապել էր եկեղեցին ներկա գունվելու սրբազն հոր պատարագին և ստանալու նրա օրհնությունները։ Այդ օրը Լենինականի եկեղեցու երգչախումբը, որ կազմված է թեմի առաջնորդական

տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի անձնովիր ճիգերով, բացառիկ հաշուաթյամբ կատարեց բառաձայն պատարագի երգեցողությունը, հոգեզմայլ ապրումներ պարզեցնով հավատացյալներին։

Պատարագի սրբազնը բարողեց Մբրոց Բարգմանչաց տոնի մասին, «Որք զարգարեցին մտօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի» Բարգմանչաց շարականից վերցված բնաբանով։ Անդրդառնալով 5-րդ դարի գրերի գյուտին և Հայ զպրության սկզբնավորման, սրբազնն ասաց, որ Հայ եկեղեցու նշանավոր գործիչները, հանձին Ս. Ասմակ Պարթևի և Ս. Մեյրոպ Մաշտոցի, գտան այն ոսկեղեն բանալին, որով բացեցին Հայ հոգու և մարի դռները Աստուծո կենդանի խոսքին։ Հայերը սեփական դիր և զրականություն չունենալու պատճառով Ավետարանը եկեղեցիներում կարդացվում էր Հունարեն կամ ասորերեն լեզուական դիր, որոնցից հավատացյալ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, և հետհարար հոգեկան սնունդ չէր ստանում։ Անհրաժեշտ էր ստեղծել մի այնպիսի միջոց, որով հնարավոր լիներ ժողովրդին մոտեցնել «Անեղի բանին»։ Այս այդ պատվավոր գործը ստանձնեց Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթև կաթողիկոսի և Վուածշապուհ թագավորի օժանդակությամբ։ Մեր պատմության մեջ, — ասաց սրբազնը, — Բարդմանցաց տոնը նշանալոր է նրանով, որ գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ Հայ մարդը մոտենում է Աստուծո և իր լեզվով խոսում նրա հետ։

Ապա քարոզիչ սրբազանը հանդաժանորեն ծանրացավ մեր մյուս թարգմանիշ վարդապետների՝ Եղիշեի, Մովսես Թերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Ծնորհալու գրական ստեղծագործությունների վրա և գեղեցկորեն նշեց նրանց կատարսծ շնորհակալ գործը մեր ինքնուրույն մշակույթի ստեղծման և զարգացման աշխատանքներում:

Սիոն սրբազանը իր գեղեցկահյուս քարոզիչ վերջում կոչ արեց ներկա հավատացյալներին, շիրակացիների հատուկ ավանդական բարեպաշտությամբ և հայրենասիրությամբ, սիրել հայոց լնզուն, հայ զիրն ու գրականությունը և նրանց զանձարանը հանդիսացող

Հայաստանյալց Առաքելական եկեղեցին ու գորգուրալ նրանց վրա:

Սիոն սրբազանի թարոզը ունկնդրվեց Հոգեկան մեծ բավականությամբ և հայրենասիրական զգացմունքներով:

Նույն օրը, սուրբ պատարագից հետո, Տ. Սիոն արքեպիսկոպոսը, Տ. Կոմիտաս վարդապետի և Տ. Արամ քահանայի ընկերակցությամբ, այցելեց Վահրամա բերդը և Մարմաշենի Հինավորց տաճարը:

Երկուշաբթի կեսօրին Սիոն սրբազանը հրաժեշտ առավ Շիրակի թեմից լավագույն տպավորություններով, անմոռանալի հիշատակներ թողնելով շիրակացիների հոգում,

ԼենինԱկԱնի ԽոլթԱկից

